Մրցույթ՝ ՀՀ Գեղարքունիքի մարզի «Լիճքի Հովի. Թումանյանի անվան միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի «Ֆիզիկայի» (14 դասաժամ), ինֆորմատիկայի (16 դասաժամ), «Մաթեմատիկայի» (16 դասաժամ), «Աշխարհագրություն» (27 դասաժամ), «Տեխնոլոգիայի» (տղաների խումբ 12 դասաժամ), «Կենսաբանության» (14 դասաժամ), «Հայոց լեզու և գրականության» (11 դասաժամ) ուսուցչի թափուր տեղերի համար

Մրցույթն անցկացվում է երկու փուլով՝ թեստավորման և հարցազրույցի: Թեստավորման փուլն անցկացվում է՝ ըստ ՀՀ ԿԳՄՍՆ մշակած հարցաշարի: Հարցազրույցի փուլի հարցաշարը կազմում է հաստատությունը և յուրաքանչյուր մասնակցի հետ հարցազրույցն անցկացնում առանձին:

Մրցույթին մասնակցելու համար պետք է ներկայացնել՝

- դիմում (ձև 1),
- 1 լուսանկար 3x4 չափի,
- բարձրագույն կրթությունը հաստատող փաստաթուղթ (դիպլոմ),
- անձը հաստատող փաստաթուղթ,
- «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան՝ աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք աշխատավայրից և աշխատանքային գրքույկի պատճենը՝ (առկայության դեպքում),
- ինքնակենսագրություն (ձև 5),
- այլ պետությունների քաղաքացիները՝ ՀՀ-ում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ,
- ՀՀ արական սեռի քաղաքացիները՝ նաև զինվորական գրքույկ
- հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր (առկայության դեպքում),
- որակավորման տարակարգ ունենալու դեպքում՝ հավաստող փաստաթուղթ:

Նշված փաստաթղթերը ներկայացնել բնօրինակների հետ /պատճենների հետ համեմատելուց հետո բնօրինակները վերադարձվում են:

Փաստաթղթերն ընդունվում են սեպտեմբերի 2-ից մինչև սեպտեմբերի 15-ը, բոլոր աշխատանքային օրերին՝ ժամը 10:00-ից 15:00-ն:

Մրցույթը տեղի կունենա 2022 թ. սեպտեմբերի 23ին՝ ժամը 12:00-ին, ՀՀ Գեղարքունիքի մարզի Լիճքի Հովի. Թումանյանի անվան միջնակարգ դպրոցում, հասցեն՝ Գեղարքունիքի մարզ, ք. Լիճք, Ա2 թղմ, 12-րդ փողոց 8 շենք:

Տեղեկությունների համար զանգահարել (094)64-46-56 հեռախոսահամարով: